

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ,
իմանալ զբանս հանճարոյ»

Աստուծոյ ողորմութեամբ և Սուրբ Հոգու շնորհներով լուսազարդուած մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին հետզհետէ իր հոգևոր սպասաւորների շարքերը ընդարձակում է, հաւատաւոր ու բարեջան երիտասարդներով, որոնք նուիրումով ծառայում են մեր աղօթքի Տուներին և մեր հաւատացեալ ժողովրդին թէ ի Հայաստան և թէ ի սփիւռս աշխարհի: Միայն Մեր գահակալութեան անցնող քսան և հինգ տարիների ընթացքում, Մայր Աթոռիս հոգևոր Ծեմարանի շրջանաւարտներից այժմ Եկեղեցու ծառայութեան գործին են լծուած մօտ հարիւր երիտասարդ հոգևորականներ՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ: Նոյնքան և աւելի շրջանաւարտներ մեր նուիրապետական միւս երեք Աթոռների կրթական հաստա-

տութիւններից, լծուած են նոյն հոգևոր առաքելութեան հայ սփիւռքի տարածքի վրայ:

Այս իրողութիւնը Մեր սիրտը լցնում է ուրախութեամբ ու մխիթարութեամբ: Նաև լաւատեսութեամբ, որ այսուհետև էլ մեր Աթոռների հոգևոր կրթարանները պիտի դաստիարակեն կոչում ունեցող նոր ուժեր, դրանք ընձայելու համար մեր Մայր Եկեղեցուն, զի տակաւին «հունձք բազում են և մշակք սակաւ»:

Մեր իղձն է և մեր հաւատացեալ ժողովրդի արդար սպասումը, որ մեր երիտասարդ հոգևորականները, կուսակրօն թէ ամուսնացեալ քահանաներ, աւելի ու աւելի զրաւեն իրենց միտքն ու հոգին՝ կրօնական ամուր հաւատքով, գիտական պատրաստութեամբ, գաղափարական նուիրուածութեամբ և ազգային-հայրենասիրական գիտակցութեամբ: Մեր օրերին հետզհետէ առաւել կարևորութիւն է ստանում հոգևորականաց կրօնա-եկեղեցագիտական լուրջ պատրաստութիւնը և ընդհանուր զարգացումը:

Յուզումով ենք յիշում երջանկայիշատակ Խորէն կաթողիկոս Մուրադբեկեանի հետևեալ յորդորները, Հայ Եկեղեցու բարեկարգութեան հարցերին նուիրուած, 1936 թուականի իր կոնդակից.

«Նպատակին ծառայելու համար, նոր հոգևորականութիւնը զինուած պիտի լինի նորագոյն գիտութեամբ, ունենայ քրիստոնէական փիլիսոփայական լայն աշխարհայեացք: Նա հիմնականօրէն ծանօթ պիտի լինի ներկայ գիտութիւնների, իմաստասիրութեան և սոցիալական գիտութիւնների եզրակացութիւններին, մանաւանդ ուսումնասիրած լինի քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունքները»:

Մեր, աւագ սերնդիս պարտքն է՝ ոչ միայն արթուն կերպով հսկել ու գործել, որպէսզի մեր կրթական հաստատութիւնները այդ գիտելիքները և զարգացումը ջամբեն մեր սաներին և շրջանաւարտներին, այլև ուշադիր ու սչալուրջ հետևել, որ նրանք նաև ձեռնադրուելուց յետոյ եռանդալից աշխատեն աւելի խորացնելու իրենց գիտելիքները, աւելի ընդարձակելու իրենց զարգացումը, անձանձրոյթ ընթերցանութեամբ և, ուր որ հնարաւոր է, յատուկ մասնագիտական դասընթացների հետևելով:

Ահա այս մտադրութեամբ և այս ակնկալութեամբ է որ քսաներկու տարիներ առաջ 8 յուլիս 1958-ին որոշեցինք մեր Եկեղեցու մէջ վերահաստատել՝ վարդապետական աստիճաններ շնորհելու աւանդական հին կարգը, նկատելով դրանք իբրև գիտական աստիճաններ և ոչ թէ պարզապէս ձևական, անբովանդակ բնոյթ կրող պարգևաբաշխումներ, երբեմն նոյնիսկ ողորմութեան նման շնորհուած:

Մեր որոշումն էր վարդապետական չորս աստիճանները շնորհել այն աբեղաներին, որոնք կը ներկայացնեն նուազագոյն յիսուն մեքենագրուած էջերից բաղկացած մի ինքնուրոյն աշխատասիրութիւն, որպէսզի յետ քննարկման և գնահատման յատուկ մի յանձնաժողովի կողմից և յետ նրա հրապարակային պաշտպանութեան, Հայրապետի հրամանով վարդապետական չորս աստիճանները շնորհուեն թեկնածուին, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում, աւանդական տուչութեան արարողութեամբ:

Ծայրագոյն վարդապետութեան աստիճանների տուչութեան համար հաստատել էինք նոյն կարգը, այն տարբերութեամբ, որ թեկնածուի ներկայացրած աշխատասիրութիւնը պէտք է լինի գիտական բնոյթ կրող մի ինքնուրոյն ընդարձակ ուսումնասիրութիւն բաղկացած նուազագոյն իննսուն մեքենագրուած էջերից:

թէ մասնաւոր և թէ ծայրագոյն վարդապետութեան համար պատրաստուած աշխատասիրութիւնները պէտք է նուիրուած լինեն աստուածաբանական, եկեղեցագիտական, կրօնա-բարոյական, եկեղեցա-մատենագրական կամ նման այլ նիւթերի և հարցերի:

Այս կարգը անխափան գործադրւում է Մայր Աթոռում առանց բացառութեան:

Արդ, քաջալերելու և գնահատելու համար մեր երիտասարդ հոգևորականների ջանասիրութիւնը և մտաւոր աշխատանքը, այսու Մեր կոնդակով պարտք ենք համարում պատուէր տալ Մայր Աթոռիս միաբան սրբազան եպիսկոպոսաց դասին, որ ամէն տեղ յարգուի վարդապետական աստիճաններ շնորհելու վերաբերեալ Մեր որոշումը, նախօրօք տեղեկացնելով Մայր Աթոռ այդ մասին, խորհրդակցելու համար Մեզ հետ:

Նաև եղբայրաբար, մեր Եկեղեցու նուիրապետական Աթոռների շնորհազարդ գահակալների ուշադրութեանն ենք յանձնում Մեր վերահաստատած և գործադրութեան դրած վերև յիշուած կարգը:

Ջերմապէս հրաւիրում ենք Հայաստանեայց Եկեղեցու բոլոր պատասխանատու հոգևոր հայրերին և եկեղեցական ազգային իշխանութիւններին, որ նախանձախնդիր լինեն և հետամուտ, որ մեր երիտասարդ հոգևորականները առաւել չափով ձեռք բերեն մտաւոր հասունութիւն և գիտական պատրաստութիւն, ու իրենց առաքելութեան ամբողջ ընթացքում ձգտեն քայլ պահել մեր ժամանակների հոգևոր, գաղափարական ու գիտական զարգացումների հետ:

Անկեղծօրէն, լրջօրէն, վճռական կերպով փորձենք մեր Եկեղեցին գոնէ մօտեցնել՝ մեր լուսամիտ եկեղեցական հայրերի և եռամեծ վարդապետների մտաւորական կատարելութեան մակարդակին:

«Իմաստունի գիտութիւնը յորդում է հեղեղի պէս և նրա խորհուրդը նման է կեանքի աղբիւրի» (Սիրաք, ԻԱ 16): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27 փետրուարի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1012